

**Զարթոճ** -ը կարելի է կարողալ նաեւ համա-  
ցանցի վրայ հետեւեալ հասցեով՝  
[www.zartonkdaily.com](http://www.zartonkdaily.com)

Ինչպէս նաեւ ձեր անհատական թղթակցու-  
թիւններն ու ծանուցումները կրնաք փոխան-  
ցել խմբագրութեան հետեւեալ հասցեներուն՝  
e-mail: zartonkadl@gmail.com  
zartonkdaily@yahoo.com  
P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon  
Tel./Fax: +961 1 444225

# ԶԱՐԹՃ

*Օրաթերթ*

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN  
77րդ Տարի, թիւ 139 (21,380) **ԵՐԵՎԱՆԻ, 30 ՅՈՒՆԻՍ 2015** 4 էջ 1000 L.O.

ژارتونك جريدة سياسية أرمنية

1915-2015  
Հայոց Ցեղասպանութեան  
100-րդ տարեկից  
Remember and Demand  
I Remember and Demand  
Je me souviens et j'exige  
أتذكر وأطالب



**Լիբանանեան Լուրեր**

**Նախագահի Ընտրութեան Համար  
Քրիստոնէական Հանրաքուէ՞**

Ազգային Ազատ Հոսանքէն երեսփոխանական պատուիրա-  
կութիւն մը երեկ այցելեց Պընըշիի, Սայֆի եւ Մաարապ, ուր  
ներկայացուց երեսփոխան Միշէլ Աունի առաջարկը՝ նախա-  
գահական ընտրութեան նախորդող քրիստոնէական շրջա-  
նակներուն մէջ հանրաքուէ մը կազմակերպելու կապակցու-  
թեամբ: Երեսփոխան Իպրահիմ Զանաան տեսակցեցաւ Մա-  
արապ հոսանքի ղեկավար Սըլէյման Ֆրէնժիէի, Փաղանգա-  
ւոր կուսակցութեան նախագահ Սամի Ժմայէլի եւ Լիբանան-  
եան Ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր Ժաաժայի  
հետ, ներկայացնելու համար Աունի առաջարկները: Ժողովնե-  
րէն ետք Զանաան դիտել տուաւ, որ իրենք կ'ուզեն նախա-  
գահ մը, որ կրնայ վերահաստատել երկրին մէջ յարանու-  
նական հաւասարակշռութիւնը եւ լիովին օգտագործել իր  
իրաւասութիւնները: Իր կարգին Փաղանգաւոր կուսակցու-  
թեան ղեկավարութիւնը հաղորդագրութիւն մը հրապարակեց,  
որուն մէջ դիտել տուաւ, թէ նախագահական ընտրութեան  
խնդիրը բացառաբար պէտք է լուծուի սահմանադրական միջոցներով: Իսկ  
Ալմարատա հոսանքի նախագահ երեսփոխան Սըլէյման  
Ֆրէնժիէ նիստէն ետք յայտարարեց, որ նախագահական հարցով  
ինք կը զօրակցի ժողովրդային հանրաքուէ մը կազմակերպելու  
առաջարկին, պայմանաւ որ բոլոր կողմերը համաձայնի  
պայմաններուն եւ համագործակցութեան ուղիին: Ֆրէնժիէ  
համաձայն իրենց առաջին ու վերջին թեկնածուն երեսփոխան  
Միշէլ Աունն է:



Միշէլ Աունի (ձախ) և Սամիր Ժաաժայի (աջ) խօսակցութիւն:

**Վարչապետ Թամմամ Սալամի Գլխավորած  
Կառավարութիւնը Նիստ Դիտի Գումարէ**

Վարչապետ Թամմամ Սալամ կառավարութեան կոչ ուղղեց  
նիստ մը գումարելու յառաջիկայ հինգշաբթի օր: Նշեց, որ  
կառավարութիւնը վերջին շաբաթներուն մատուցած է անգոր-  
ծութեան, նկատի առնելով Ազգային Ազատ Հոսանքի նախա-  
րարներու պոյքոթի որոշումը: Մինչ այդ Կրթութեան եւ բարձ-  
րագոյն ուսման նախարար Իլիաս Պու Սաապ նշեց, որ Ազգա-  
յին Ազատ Հոսանքի նախարարները ներկայ պիտի գտնուին  
կառավարութեան նիստին: Այնուամենայնիւ ան դիտել տուաւ,  
որ նիստին ընթացքին պէտք է արժարծուին Արսէլի դէպքերուն  
եւ ապահովական նշանակումներու թղթածրարները: Պու Սաա-  
պի համաձայն նշանակումներու հարցով հաւանաբար շուտով  
որոշում մը կ'ընդհանրուի:

**Ժումպաթ - Տեյվիտ Զեյլ Հանդիպում**

Ժողովրդավարա-  
կան հանդիպում խոր-  
հրդարանական հա-  
մախմբումի նախագահ  
Երեսփոխան Ուալիտ  
Ժումպաթ, երեկ տե-  
սակցեցաւ Պեյրուի  
Սոմ Միացեալ Նա-  
հանգներու դեսպան  
Տեյվիտ Զեյլի հետ: Դես-  
պանը նաեւ լիբանանեան ու  
շրջանային զարգացումները  
քննարկեց արդարադատութեան  
նախարար Աշրաֆ Ռիֆիի  
հետ:



**Շրջանային Լուրեր**

**Ուալիտ Մուալլէմ Ռուսիոյ Մէջ**

Սուրիոյ արտաքին գործը նախարար Ուալիտ Մուալլէմ երեկ  
Մոսկուայի մէջ տեսակցութիւններ ունեցաւ Ռուսիոյ նախագա-  
հին եւ արտաքին գործը նախարարին հետ: Վաստիմիր Փու-



թին Մուալլէմի հետ տեսակցութեան ընթացքին վերահաստա-  
տեց, որ իրենք պիտի շարունակեն զօրակցիլ Սուրիոյ կառա-  
վարութեան: Մուալլէմ դիտել տուաւ, որ Փուրթին խոստացած է  
այս առումով օգնութիւններ ներկայացնել զինուորական,  
քաղաքական եւ տնտեսական ոլորտներուն մէջ: Մուալլէմ նաեւ  
կարծիք յայտնեց, որ երկրի հարաւային հատուածին մէջ տիրող  
կացութիւնը մտահոգիչ է: Ռուսիոյ Արտաքին գործը նախա-  
րար Սերգեյ Լավրով Մուալլէմի հետ տուած մամլոյ միացեալ  
ասուլիսի ընթացքին նշեց, որ իրենք պիտի շարունակեն պայ-  
քարիլ ահաբեկչութեան դէմ: Լավրովի համաձայն Մուսկուա  
պատրաստ է հիւրընկալելու սուրիական երկխօսութեան հեր-  
թական փուլը:

**Իսրայէլեան Ուժեր  
Պաղեստինցիներուն Օգնութիւն  
Փոխադրող Նաւը Գրաւեցին**



Իսրայէլեան ուժեր երեկ առաւօտեան տիրապետութիւն  
հաստատեցին Կազա ուղղուող զբոսաշրջական նաւատորմի  
Մարիամ նաւուն վրայ, որ կը փորձէր օգնութիւններ փոխանցել  
պաղեստինցիներուն: Իսրայէլի վարչապետ Բենիամին Նա-  
թանիահու ողջունեց այդ գործողութիւնը եւ դիտել տուաւ, որ  
օգնութիւն անհրաժեշտ է Կազա փոխանցել նկատի առնելով,  
որ Կազա պաշարումի տակ չի գտնուիր: Իսրայէլի վարչապետը  
նաեւ դիտել տուաւ, որ իրենք կը մտադրեն քաշուիլ Մարդկային  
իրաւունքներու միջազգային խորհուրդէն, որովհետեւ այդ խոր-  
հուրդը խստիւ քննադատած էր Իսրայէլը՝ Կազայի պատերազ-  
մի շուրջ իր վերջին զեկոյցին մէջ: Իսրայէլեան բանակը պնդեց,  
որ այդ նաւերու ուղղութեամբ տեղի ունեցած գործողութեան  
հետեւանքով որեւէ վիրաւոր չկայ:

**Ֆաթէհ Կը Հարուածէ Հրճապալլայի  
Դիրքերուն**

Ֆաթէհի բանակ կազմակերպութիւնը նշեց, որ թիրախ դար-  
ձուցած է Հրճապալլայի պատկանող զինուորական մեքենաներն  
մէկը Զալամունի բարձունքներուն վրայ, մինչ սուրիական  
աղբիւրներ նշեցին, որ Հասաբէի մէջ բախումները շարունակ-  
ւած են Իսլամական Պետութիւն կազմակերպութեան յարձա-  
կումներուն լոյսին տակ:

**Իսրայէլ Պատրաստ Զօրակցելու  
Սուրիոյ Ընդդիմադիր Կողմին**

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Մոշէ Ալոն դիտել  
տուաւ, որ իրենք պատրաստ են զօրակցելու սուրիացի ընդդի-  
մադիրներուն, պայմանաւ որ ընդդիմադիրները չմտնեն սուրի-  
զիներուն: Պաշտպանութեան նախարարին համաձայն սուրիա-  
ցի ընդդիմադիրներուն հետ փոխ-համաձայնութիւնը կանգուն  
կը մնայ, եթէ խախտումներ չըլլան, այնպէս ինչպէս կատարուե-  
ցաւ վերջերս սուրիացի տիրազիններուն շրջագիծին մէջ:

**Թուրքիա Մտահոգ Սուրիական  
Սահմաններով**

Թրքական լրատուամիջոցներ հաղորդեցին, որ Թուրքիոյ  
Ազգային Անվտանգութեան խորհուրդը կը մտադրէ նիստի մը  
ընթացքին քննարկել, Սուրիոյ հիւսիսային հատուածին մէջ  
ապահովական գոտի հաստատելու նպատակով՝ զինուորական  
ցամաքային գործողութիւն մը իրականացնելու հաւանա-  
կանութիւնը: Նախապէս Թուրքիոյ վարչապետ Ահմետ Տաւուտ-  
օղլուն դիտել տուած էր, որ իրենք պիտի չարտօնեն թրքական  
սահմաններու խախտումը:

**Տեյվիտ Գամբրոն Սուրիոյ  
Կառավարութեան Օգնելը Սիալ  
Կը Համարէ**

Մեծն Բրիտանիոյ վարչապետ Տեյվիտ Գամբրոն յայտարար-  
եց, որ Սուրիոյ կառավարութեան հետ համագործակցութիւնը  
Տաւշիի դէմ կռուելու համար մեծ սիալ կը համարուի: Անոր  
խօսքով Տաւշ կը շարունակէ լուրջ վտանգ սպառնալ Արեւ-  
մուտքին: Գամբրոն դիտել տուաւ, որ Իսլամական պետութիւն  
կազմակերպութեան զինեալները Սուրիոյ եւ Իրաքի մէջ կը  
ծրագրեն՝ Մեծն Բրիտանիոյ դէմ յարձակումներ գործել: Նա-  
խապէս տեղեկութիւններ նշած էին, որ ծայրայեղական կազ-  
մակերպութիւնները կը փորձեն Երոզպա հասնիլ գաղթա-  
կաններու նաւակներով:

**Կ Ո Չ**

Ի յարգանս Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ներսէ  
Պետրոս ԺԺ.-ի վախճանումին, հայ քաղաքական երէք  
կուսակցութիւնները կոչ կ'ուղղեն, որ Երեքշաբթի, 30 Յունիս  
2015-ին, հոգեւոր տիրոջ թաղման կարգին եւ յուղարկարու-  
թեան ընթացքին փակ պահուին բոլոր հայկական հաստա-  
տութիւնները, կէսօրէ ետք ժամը 4:00-էն 5:00:

**Հայրենի Լուրեր**

**ԱՄՆ Դեսպանատունը Բոլոր  
Կողմերուն Կը Յորդորէ  
Զսպուածութիւն Պահպանել**

Հայաստանի մէջ ԱՄՆ-ի դեսպանատունը Twitter-ի իր էջի մէջ  
յայտարարութիւն տեղադրած է՝ յորդորելով բոլոր կողմերուն  
խաղաղ, զուսպ պահուածք ցուցաբերել՝ ժողովրդական արժեք-  
ներուն համապատասխան Երեւանի կեդրոնի մէջ ստեղծուած  
լարուած իրավիճակի բերումով:



Գրութեան մէջ մասնաւորապէս ըսուած է.  
«Զաղաքի կեդրոնի մէջ ստեղծուած լարուած դրութեամբ  
մտահոգութեամբ կը յորդորենք բոլոր կողմերուն խաղաղ,  
զուսպ պահուածք ցուցաբերել՝ ժողովրդական արժեքներուն  
համապատասխան», ըսուած է գրառման մէջ:

**ՀԵՑ-ի Մէջ Հաշուեքննութիւն  
Իրականացնելու Համար  
Կը Պահանջուի 3-6 Ամիս**

Դաւիթ Յարութիւնեան

Վանկարկուող կարգախօսը՝ «Մենք ենք տերը մեր երկրի»,  
կ'ենթադրէ, որ պէտք է ըլլալ ոչ միայն պահանջատեր, այլ նաեւ



Երկրի գործընթացի  
մասնակից: Այս հա-  
սարակական գործու-  
նութիւնը ցոյց կու  
տայ, որ մարդիկ պատ-  
րաստ են մտնելու գոր-  
ծընթացներու մէջ, ըլ-  
լալ տեղեկացուած,  
դառնալ որոշումներու  
կայացման մասնակ-  
կից: Նման տեսակետ  
յայտնած է ՀՀ կառա-  
վարութեան աշխատակազմի  
ղեկավար-նախարար  
Դաւիթ Յարութիւնեանը  
«Արմենիա» հեռուստաընկերութեան  
թէթրով:

«Սա այն ողջամիտ լուծումն է, որը պէտք է առաջարկուի:  
Անվտանգութիւնն ամենաբարձրը բանն է, որ կարող է լինել  
մեր երկրում: Այն ունի բազմաթիւ պատճառներ, եւ երկրում  
կան բազմաթիւ չլուծուած խնդիրներ, որոնք ծնում են այդ  
անվտանգութիւնը: Մենք պէտք է քայլ առ քայլ առաջ գնանք՝  
իշխանութիւնները փոխուեն, հասարակութիւնը դառնայ աւելի  
տեղեկացուած երկրի անցուդարձի մասին», «Արմենիա»-ի  
հաղորդմամբ՝ ըսած է Յարութիւնեան:

Անոր խօսքով՝ պէտք է ծրագրել մինչեւ 2036 թուականը, թէ  
ինչպիսի զարգացումներ պէտք է ապրի երկրի ուժանիւթային  
համակարգը: «Ի վերջոյ մենք ունենք մաշուած կայաններ,  
եղեկութիւններ կայաններ օգտագործման աճող միտում, եւ այդ պա-  
րագայում ամենը պէտք է պլանաւորել (ծրագրաւորել): Իսկ  
ամենը յանգում է սակագինն եւ պէտք է ընտրել այնպիսի միջոց,  
որը կը սուսակցի սակագինը: Շատ կարեւոր է, որ մեր ռազ-  
մավարական յենասիւնը լաւ կառավարուի, եւ կառավարու-  
թիւնը շահագրգիռ է, որպէսզի այնտեղ ամենը արուի պատշաճ:  
Սակայն կառավարման լաւ կամ վատ լինելը ուղղակիօրէն չի  
ազդում սակագին վրայ», նկատած է կառավարութեան աշխա-  
տակազմի ղեկավար-նախարարը:

**Լուրեր Արաբական Աշխարհէն**

**Եգիպտոսի Ընդհանուր  
Դատախազը Ահաբեկուած**

Լրատուական տեղեկութիւններ նշեցին, որ Եգիպտոսի ընդ-  
հանուր դատախազը երեկ մահացաւ առաւօտեան՝ մայրա-  
քաղաք Գահիբէի Նասր հատուածին մէջ, իր ինքնաշարժը  
թիրախ դարձուցած պայթուիւն կրած վերքերուն հետեւանքով:  
Տեղեկութիւնները նշեցին, որ ական մը թիրախ դարձուցած է  
ընդհանուր դատախազին ինքնաշարժը, երբ ան կը շրջագայէր  
Գահիբէի մէջ:

**Եմենի Մէջ Վեց Անձեր Սպանուած**

Եմենի մէջ տեղի ունեցած օդային յարձակումներուն հետե-  
ւանքով սպանուեցան առնուազն վեց անձեր հարաւային  
հատուածին մէջ: Յարձակումները շարունակուեցան մինչ այդ  
Սեուտական Արաբիոյ սահմանային դիրքերու ուղղութեամբ:



## Ինչպիսի՞ր Աւարտ Կրնայ Ունենալ Մարշալ Բաղրամեանի Պայքարը

Բազմաթիւ ներքին եւ արտաքին գործօճներ կան, որոնք կ'ազդեն Հայաստանի ինչպէս ներքաղաքական, այնպէս ալ արտաքին քաղաքական զարգացումներու վրայ: Այդ պատճառով բարդ եւ անշտրիկալ գործ պիտի ըլլայ կանխատեսել, թէ ինչպիսի՞ր հանգուցալուծում, ինչպիսի աւարտ կ'ունենայ Մարշալ Բաղրամեան պողոտայի վրայ շարունակուող ընդվզումը՝ ընդդէմ ելեկտրականութեան գինի 7 դրամով թանկացման:

Ներկայացնենք հիմնական եւ հնարաւոր զարգացումներն ու հանգուցալուծումները:

Առաջին. Հայաստանի իշխանութիւնները կը գտնեն ձեռք եւ չեղեալ կը յայտարարեն 7 դրամի աւելացումը: Բաղրամեան փողոցը կը նահանջէ եւ տուն կ'երթայ: Երբ քու պահանջը թեքելիք է եւ քու պահանջիդ տրուած է լուծում, ապա դուն ստիպուած կ'ըլլաս սեղմելու իշխանութիւններուն՝ քեզի անվերջ կեղեքող, ընտրութիւններ կեղծող ձեռքը: Յաջորդ անգամ դուն տեսականօրէն հնարաւորութիւն կունենաս նոր Բաղրամեան ունենալու, երբ 7 դրամով կրկին կը բարձրացնեն ելեկտրականութեան, ջուրի, կազի, հասարակական փոխադրամիջոցներու գինը: Այսպիսով, երբ դուն կը պայքարիս հետեւանքներուն դէմ, իշխանութիւնները քեզի համար անդադար հետեւանքներ կը ստեղծեն ու քեզի հալածաշէջ կ'ընեն Բաղրամեան պողոտայի կամ Ազատութեան հրապարակի վրայ:

Կարծիքներ կը հնչեն, որ այն ինչ կը կատարուի Բաղրամեան պողոտայի վրայ, ընդհանուր առմամբ կը կառավարուի իշխանութիւններուն կողմէ: Այս վարկածին ի շահ կը խօսին որոշ փաստեր՝ ցուցարարներու շարքին քիչ չեն իշխանամետ տրամադրութիւններ ունեցող փորձագետներ, լրագրողներ, քաղաքագետներ, քաղաքական գործիչներ, շուր պիզնէսի ներկայացուցիչներ: Պետք չէ բացառել, որ իշխանութիւնները կը խրախուսեն այդ մարդոց ներկայութիւնը, վերահսկելի հեռուստաընկերութիւններով կը լուսաբանեն ցուցերը, որպէսզի վարկաբեկեն շարժումը: Միւս կողմէ, փաստ է, որ ցուցարարներու շարքին են իշխանափոխութեան ձգտող ուժեր, ծայրայեղ ընդդիմադիր հայեացքներով գործիչներ: Այսպիսով, ի տարբերութիւն Հայաստանի մէջ նախապէս տեղի ունեցած զանգուածային ցուցերու, այսօր Բաղրամեան պողոտան ներառած է հասարակութեան ամենատարբեր շերտերու եւ հայեացքներու տեղ մարդիկ:

Երկրորդ. իշխանութիւնները յստակ որոշումներ չեն ընդունիր, կը ձգձգեն 7 դրամի հարցը, տարբեր խոստումներ կու տան, ժամանակ կը շահին, բայց նաեւ ցուցարարներու դէմ այլեւ բռնութիւններ չեն կիրառեր (ինչպէս Յուլիս 23-ի գիշերը): Այսպիսով, շարժումը կամաց-կամաց կը մարի, մարդիկ կը յոգնին անորոշութեմ եւ ամառուան տաքէն, ցուցարարներու տարբեր խումբերու միջեւ կ'առաջանան հակասութիւններ: Մարշալ Բաղրամեան փողոցը կը բարկի ինքնաբերաբար: Այս զարգացումը հարազատ է Հայաստանի փողոցային պայքարին: 1996, 2003, 2008 եւ 2013 թուականներու նախագահական ընտրութիւններուն յաջորդած փողոցային շարժումները, որոնք կը ներգրաւուէին տասնեակ եւ հարիւր հազարաւոր մարդիկ, ամիսներու ընթացքին մարած են, որոնց շարքին՝ օրուան իշխանութիւններու կողմէ բիրտ ուժ կիրառելու պատճառով նստելու:

Այսօր շատ կը խօսուի, որ Բաղրամեան պողոտայի ընդվզումը քաղաքական չէ, այլ՝ ընկերային: Ատոր մէջ կայ ճշմարտութիւն, սակայն, միւս կողմէ, ընկերային ընդվզումը եւ քաղաքական է: Եթէ Բաղրամեան պողոտայի վրայ ցուցարարները քաղաքական պահանջներ, որոնք շարքին՝ իշխանափոխութեան, դեռեւս բացայայտ չեն ներկայացներ, ատիկա չի նշանակեր, որ յառաջիկային պիտի չեն ներկայացնեն:

Երրորդ. իշխանութիւնները տեսնելով, որ Բաղրամեան պողոտան աւելի մարդաշատ կը դառնայ, պահանջները կը դառնան արմատական, ընդհուպ մինչեւ իշխանափոխութեան կոչները, բիրտ ուժ կը գործադրեն: Հայաստանի ժողովրդավարութեան համար ատիկա են հարազատ տարբերակ է: Իշխանութիւնները բիրտ ուժ գործադրած են 1996-ի Մեպտեմբերին, 2004-ի Ապրիլին, 2008-ի Մարտին: Վերջինը ունեցաւ ողբերգական հետեւանքներ. սպանուեցաւ 10 մարդ, բազմաթիւ ընդդիմադիր քաղաքական գործիչներ բանտարկուեցան:

Անշուշտ կարելի է պատկերացնել իրադարձութիւններու այլ տարբերակներ եւս, սակայն հանգուցալուծումը, ամենայն հավանականութեամբ, պիտի տեղաւորուի վերոնշեալ երեքի շրջանակներու մէջ:

Ստեղծուած իրավիճակը ունի առնուազն երկու արտաքին վտանգ: Առաջինը Ազրայեճանի կողմէ հնարաւոր սադրանքներն են եւ սահմանի երկայնքով լարուածութեան նոր սրացումներ հրահրելը: Միւս կողմէ, պետք չէ բացատրել, որ Հայաստանի իշխանութիւնները մատի փաթեթեան դարձնելով ազրայեճանական վտանգը (ինչ որ իրականութեան մէջ կայ եւ ատիկա այսօրուան Հայաստանի մեծագոյն սպառնալիքներէն է)՝ բիրտ ուժ կիրառեն եւ ցրեն ցուցարարները: Կարճաժամկետ կտրուածքով ատիկա թերեւս կը բխի գործող իշխանութիւններու շահերէն (իշխանութիւնը ամէն գնով պահելու մղումն մեկնած), սակայն երկարաժամկետ հիմքով պիտի աշխատի ընդդէմ նոյն իշխանութիւններու եւ ընդդէմ Հայաստանի պետութեան եւ անոր արտաքին դիմադրողի ու ներքին համերաշխութեան:

Միւս վտանգը կրնայ գալ Ռուսիայէ: Գտնուելով Մոսկուա եւ այս օրերուն բազմաթիւ հանդիպումներ ունենալով փորձագետներու ու քաղաքագետներու հետ, ինձի համար ակնյայտ դարձաւ, որ Ռուսաստանը իր կենսական շահերու համար մեծագոյն վտանգ կը տեսնէ այսպէս կոչուած «գունաւոր յեղափոխութիւնները»: Ռուսական լրատուամիջոցները, որոնք խիստ կը վերահսկուին Քրեմլինի կողմէ, ուղղակիօրէն կը գրեն, որ Հայաստանի մէջ կատարուող «Ուլքրանական Մայտան է»: Ռուսական լրատուամիջոցներու մէջ կարելի է հանդիպիլ սադրիչ, հակահայ, ինչպէս նաեւ՝ վիրաւորական ձեւակերպումներ: Հայաստանի մէջ ծաւալող իրադարձութիւններուն կարելի չէ տալ հակառուսական երանգ եւ ուղղութիւն: Ռուսական լրատուամիջոցները կը ընդգծեն իրենց սադրանքները: Ատիկա չափազանց թանկ կնայ ըլլալ Հայաստանի համար: Մենք պետք է փորձենք բացատրել ռուսներուն, թէ նոյնիսկ անոնք չեն ուզեր ատիկա հասկանալ: Անկախ իրադարձութիւններու զարգացումներէն եւ հանգուցալուծումներէն՝ Հայաստանը եւ Ռուսիան պետք է ունենան ռազմավարական, դաշնակցային, իրաւահաւասար յարաբերութիւններ:

ԹԱԹՈՒՆ ՅԱՎՈՐԵԱՆ  
Մոսկուա - ԱՆԻ կեդրոն

## Համշէնէն Մէկը Պէյրուսի Մէջ

Վերջին տասնամեակներուն ատենը հեղ մը հայ մամուլը թէ՛ երկրի, թէ՛ արտերկրի մէջ կը խօսի Համշէնի մասին:

Բայց մինչեւ օրս, այս քաղաքին մէջ ուր կը գտնուիք, տեսած չէիք համշէնցի մը: Վերջապէս տեսանք համշէնցի մը, որ կը խօսեր հայերէն:

Այդ հայերէն խօսող համշէնցի գրագետ մըն էր, որ վերջերս հրատարակած էր եռալեզու հատոր մը (335 էջ) թրքերէն, համշէնէրէն ու հայերէն:

Հեղինակը՝ Մահիր Եօզքան Արտուրի նահանգի գիւղերէն մեկուն մէջ ծնած 1976ին, գինուած համալսարանական բարձրագոյն ուսումով, ինքզինք նուիրած է իր մայրենի բարբառի ուսումին եւ իր մայրենի լեզուով գիրքեր հրատարակ իջնող նուիրած մըն է: Մահիր Եօզքան Պէյրուս կը գտնուի հրատարակչական Ֆ.Բ.Ը. Միութեան Հ.Ե.Ը. Անդրանիկ մշակութային յանձնախումբին:



Չիք հանրութեան ներկայացնող եղաւ ինչ ու նոր թրքերէն լեզուն խորապէս իմացող Կարո Աբրահամեանը Ուրբաթ, 19 Յունիս 2015 երեկոյան ժամը 8:30ին, Հ.Բ.Ը. Միութեան Տեմիթեան կեդրոնին մէջ:

Երեկոն վերնագիր մը ուներ. Համշէնցիներ «Իւլամ են թուրք չեն, Հայ են Զրիստոնեայ չեն»:

Կարդալով այդ վերնագիրը հարց մը կը ծագի մեր միտքին մէջ - եթէ համշէնցի մը այլակրօս ամուսնանայ հայուհիի մը հետ, իր զաւակները Պոլսոյ մէջ որկէ հայկական դպրոց ու իր տունին լեզուն լիովին ըլլայ հայերէնը, պիտի ընդունինք զայն որպէս հայ - եւ կ'ընդունինք: Ընթերցողներ, մեր քաղաքին մէջ բազմաթիւ հայ ընտանիքներ իրենց զաւակները կը վստահին օտար վարժարաններու, որոնք կը բռնեն այլասեռումի ճամբան, ինչ կ'ըսէք այդ մասին ընթերցողներ, եւ ինչ կ'ըսէք վերի օրինակին մասին, որ հայկական դաստիարակութիւն կու տայ իր զաւակներուն:

Աւելի քան հարիւր հայեր հետեւեցան համշէնցի այս հայուն ելոյթին ու մերթ յուգումով, ճակատագիրը՝ այս պարագային օսմանցին կրցած էր այլակրօս դարձնել համշէնցիներու այն բազմութիւնները, որոնք Տրոյ դարէն սկսեալ Ամատունիներու սերունդներէն ապրելով մայր հողին վրայ, պահած էին իրենց լեզուն՝ մայրենիին համշէնական բարբառը:

Այդ երեկոյի մենք լսեցինք Կարո Աբրահամեանի զեկոյոցը Համշէնի մասին, որ միաժամանակ խօսեցաւ Մահիր Եօզքանի վերջին հրատարակած «Համշէնէան Պատմութիւններ» հատորին մասին:

Ուրեմն տեսանք համշէնցի մը եւ իր գիրքը: համշէնցի մը, որ իր ելոյթով հաստատեց իր հայ ըլլալու եւ հայ մնալու վճռակաւ մտիւթիւնը:

Նախակարապետ մը Համշէնէն, որ գինուորեալն է իր ժողովուրդին, որ վճռած է բոլորին ծանօթացնել Համշէնը իր արուեստով, տոկացող բարբերով, սովորութիւններով, որոնք հայկական են:

Դիտեցինք «Մովի» (որ համշէնէրէն մայր կը նշանակէ) ֆիլմը, բեմադրիչ Եօզքան Ավեր, որ նոյնպէս համշէնցի էր: Ուրեմն հայոց հին արմատն էր բարունակներ ծլած են. գրող ու բեմադրիչ, դարերու յարատեւութեան արդիւնք:

Մահիր Եօզքան հանդէս եկաւ բանաստեղծութեան, որուն միացուց սահիկներու ցուցադրութիւն, որով գաղափար մը կազմեցինք համշէնցիներու լեռնաշխարհին մասին:

Ուշադրութեամբ լսեցինք նաեւ համշէնէան երաժշտութիւն, ուր տխրութեան հոլմեր կը թեսածէին, թէեւ երաժշտական գործիքները այդ երգերուն խանդավառութեան հով մը կը ջանային ջամբել:

Մէկ խօսքով երեկոն դարձած էր համշէնական, որուն հանդէպ մեր Նորհակալութեան խօսքը կ'երթայ թէ՛ Հ.Ե.Ը. Մշակութային Միութեան, թէ՛ Տեր եւ տիկին Կարո Աբրահամեաններուն, որոնք մեծ բաժին ունենին այս երեկոյի կազմակերպումին մէջ:

Սիրելի ընթերցողներ, որպէսզի ձեզ եւս մասնակից դարձնենք՝ յիշեալ գիրքը պատմութեամբ մը կատարենք մէջերում, որ համետեսած ըլլաք Համշէնի բարբառը. - մէջերումն են առաջ չմոռնանք ըսելու, որ Մահիր Եօզքան պատասխանեց գրաւոր ներկայացուած բոլոր հարցերուն:

Ուրեմն ահա մէջերում մը համշէնահայերէն. - Մովին մեզի պէս չէր: Ան մեզի պէս փեթիփեթալ (աճապարող) չէր: Եմմէն բան կամաց կամաց կ'ենէր: Անուզին /ատենին/ մարդիկ մեզի պէս թեքատելով /վազելով/ ապրել չէին: Մովին ինչի մէ /բան մը/ սողող էլլիր հասն երկէն երկէն կ'ասէր անու համաւ Եմմէնէն /անմիջապէս/ ասել չէր: Առաջ հեքիս մէ բաց կ'ենէր /կը պատմէր/:

Կարծեմ գաղափար մը կազմեցիք: Ընտրաւորելի կը գտնենք այս միջոցառումը: Համշէնին, համշէնցիին մօտէն ծանօթանալը մեզ նոր պարտաւորութիւններու կրնայ առաջնորդել, որմէ փախուստ տալը, նոյն այդ հայերը թրքանալու կրնայ տանիլ՝ մանաւանդ երբ անոնք ակամայ, ուժի ու բռնութեան տակ դարբերու ընթացքին դարձած են այլակրօս:

Ճիշդ կ'ըլլայ զանոնք հովանաւորելը:

3. 9. Եօզքանի Գիրքը հրատարակուած է Պոլսոյ «Արաս» հրատարակչութեան կողմէ: Փակագիծերու մէջի հասկնալի բառերը շարադրած է վերոնշեալ հրատարակչատան տնօրէն Արտաշէս Մարկոսեանը:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

## Հայկական Բարբեր

# Աշխարհի 100 Ամենաազդեցիկ Մարդիկը

Աշխարհաբնական «Թայմ» (Time) շաբաթաթերթի Ապրիլ 27 եւ Մայիս 4, 2015 թուականները կրող Երկշաբաթեայ բացատիկը նուիրուած էր աշխարհի 100 ամենաազդեցիկ մարդոց (100 Most Influential People):

Մեզ փոխառնողը այն բացատիկ երեւոյթն է, որ աշխարհի այդ 100 ամենաազդեցիկ մարդոց երկուքը հայեր են: Այդ երկու հայերուն ինքնութիւնը պիտի բացայայտեմ աւելի ուշ:

Աշխարհի 100 ամենաազդեցիկ մարդիկը բաժնուած էին հինգ դասակարգերու, փոխառնալով ձեռքը:

### 1. Առաջնորդներ (Leaders)

Այս մասին մէջ յիշուած են երկիրներու նախագահներ, վարչապետներ եւ ղեկավարներ: Օրինակի համար նախագահներ Պարաք Օպամա, Ռուս Բարաք Օբաթա, Վլադիմիր Բուդին, Ալեքսի Յիլարաս եւ Ջայ Շինկելին:

Վարչապետներէն յիշուած են Անճելա Մերքըլը ու Պեննապեն Կարաճիան: Կան նաեւ թագաւոր Սալման պըն Ապտուալազալ ալ Սաուտը ու մենատեր Քիմ Շանկ Ունը:

### 2. Արուեստագէտներ (Artists)

Հոս տեղ գտած են երաժիշտ-դերասան Թիմ Մքլորն, դերասան Պրեմի Քուրթը, դերասանուհի-երգչուհի Օտրա Մքրա-նըլը, դերասանուհի Շուկիանա Մարկուիզը, դերասանուհի Շուկիանա Մօրն ու երգիծաբան Շան Օլիվըրը:

### 3. Սրբապատկերներ (Icons)

Այս բաժնին մէջ յիշուած են անձեր որոնք մեծ ներդրում ունեցած են աշխարհի քաղաքական թէ՛ ընկերային մարզերէն: Օրինակի համար կարծիքով աշխարհի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկո Ապալ, Միացեալ Նահանգներու Գերագոյն Աստանի դատաւոր Ռութի Կիլգուրը, Միացեալ Նահանգներու ֆուտբոլի կիներու հաւաքականի խմբապետ Էլայի Ուսմայէլը, Գալիֆորնիոյ կառավարիչ Ճեյմս Պարսոնը, աշխարհա-հռչակ երգչուհի Թեյլըր Սուիֆթը ու փաթիստանցի Նուպէլեան Խաղաղութեան մրցանակակիր Մալալա Եուսուֆալը, որ ջատագովը հանդիսացաւ երիտասարդ պարմանուհիներու ուսման եւ որուն համար թիրախը դարձաւ անաբեկիչի մը գնդակին...:

### 4. Ռահվիրաներ (Pioneers)

Այս բաժինը նուիրուած է այն գիտնականներուն, թղթակիցներուն եւ բարեսիրական նպատակներու նուիրուած գործօն մարդոց՝ որոնք ջատագովը հանդիսացած են աշխարհի բնականութեան ատողջապահական խնամքին ու մարդկային համահասարակ իրաւունքներու իրագործման եւ զարգացման:

Յիշուած անձերէն են աստղաբանուհի Սթաք Քելի, բժշկ-գիտնական Բարոնի Սապօթի, լրագրող Ջայ Շինկ, կրթական մշակ Սալման Խան, ճարտարապետ Ջահան Հատիտ, Հոնկ Բոնկի քաղաքական տիրող կացութեան դէմ բողոքող մեծահարուստ Շիմի Լայ եւ մեր հայազգի Անիթա Սարգիսեանը:

Ճեմինիսը Անիթա Սարգիսեանը կը գլխաւորէ սեռերու հասարակութեան ջատագովող շարժումը: Անոր յախուռն պայքարի թիրախը հանդիսացած են video-ի խաղերը, որուն փրկանքը ցարդ այդ մարդեր են միայն: Իր մասին գրող դերասան-ֆեմինիստ Ուիլ Ուիլքոնը փոխառնալով ձեռքը կ'արտայայտուի Անիթայի նկատմամբ «Ան իր պայքարը պիտի չկատարէ մինչեւ որ հասնի իր նպատակին, որը շատ հեռու չէ»:

### 5. Տիտաններ (Titans)

Այս բաժինը յատկացուած է այն անձնավորութեանց՝ որոնք ուրիշներէն քիչ մը աւելի լաւ գործ յառաջ տարած են իրենց ասպարէզին մէջ:

Հոս յիշուած են համակարգիչներու նշանաւոր Apple ընկերութեան գլխաւոր վարիչը Կարոլ Յոբս (CEO) Թիմ Բուքը, ICICI դրամատան գլխաւոր վարիչը Կարոլ Շանտա Քոչարը, աշխարհաբնական Տիտան ընկերութեան գլխաւոր վարիչը Կարոլ Մայկ Իլլըրը, համակարգիչներու Microsoft ընկերութեան գլխաւոր վարիչը Կարոլ Սթաք Նատելլան, Միացեալ Նահանգներու Դաշնակցային Պահեստի Դրութեան (Federal Reserve System) կառավարիչներու խորհուրդի ատենապետուհի Շանել Յելընը ու մեր հայազգի դերասանուհի Քիմ Քարտաշեանը:

Քիմ Քարտաշեանի մասին վկայելով՝ փոխառնալով աստղ եւ գիրքերու ֆեմինիստ Մարիա Սթիվըրթը փոխառնալով ձեռքը արտայայտուած է: «Ան գեղեցիկ է, աշխույժ, վճռակամ, աշխատունակ եւ ամենակարեւորը՝ ընտանիքին կապուած անձ մը: Ան այնքան ժողովրդական է որ ունի 30 միլիոն փոխառնող՝ փոխառնալով իր ծրագրիներուն:

Հիմա չմոռնանք աւելցնելու որ Քիմ Քարտաշեան իր ամուսնուց, դատեր եւ թոշ կետ այցելելով Հայաստան եւ Երուսաղեմ՝ անցեալ Ապրիլ ամսուայ ընթացքին, հայութիւնը ու Հայոց Յեղափոխութիւնը Գիւլ Պարաքի աշխարհի կարեւոր բոլոր թերթերուն առաջին էջերուն վրայ:

Մենք ինքզինքնիս իսկապէս հպարտ պէտք է զգանք, որ աշխարհի հինգ ցամաքամասերէն ընտրուած 100 ամենաազդեցիկ մարդոց երկուքը հայեր են: Երեւակեցե՛ք որ նոյնիսկ Ֆրանսայի նախագահն ու Մեծն Բրիտանիոյ վարչապետը տեղ չեն կրցած գտնել այդ բարեբախտ ցանկին մէջ...:

ԳԻՈՐԳ ԲԵՇՆԵՐԵԱՆ



# ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿԵԱՆՔ

Նիւ Եորք - ԱՄՆ

## Իսթանպուլի Պատանեկան Տունը

Եզակի նախաձեռնություն մը Ցեղասպանության դարադարձի այս օրերուն, այս անգամ կուգայ Հայ Անտարանական համայնքէն: Անոր գաւաղները եւ անմահ չմահացն Մեծ Եղեռնի սարսափի օրերու արհաւիրքէն երբ անոնցմէ շատեր նահատակեցան ու մնացեալը բռնեցան դէպի անձնաօթ հորիզոններ ու անպատաններ:

Ամերիկայի Հայ Անտարանակալական Միութիւնը (ԱՀԱՄ - AMAA) վերջերս ունեցաւ իր Նոր տնօրէնը յանձնիս Չաւեն Խանճեանի: Ան հայաշունչ ու հայատրոփ մաքուր այն հասարակական գործիչն է, որ արդէն կը ցուցաբերէ ազգային Նոր ոգի մը այս հաստատութենէն ներս: Ան սիրուեցաւ առաջին պահէն Մեծագոյն Նիւ Եորքի ազգայիններէն ու կազմակերպութիւններէն: Ու ատոր ալ ապացոյցը կը կազմէ այս դասախօսութիւն-գրքի շնորհահանդէսը նուիրուած Իսթանպուլի Պատանեկան Տան, որ անցնող ամիսներուն առատ Նիւթ հայթայթեց հայ թէ օտար մամուլին երբ երիտասարդներ կը մնային պահանջատերը աւելի ծանօթ՝ «Արմէն Ճամբար»ին:

12 Յունիս 2015, Ուրբաթ երեկոյեան, Փարամբսի (Նիւ Ճորճի) Հայ Անտարանական (Փրեսփիթերիքը) եկեղեցին լեցուցած էին մեծ թիով հայորդիներ, որքա՞ն անտարանական համայնքէն նոյնքան եւ անելին ընդհանրապէս ազգասէր հասարակութենէ՞ն՝ եկած մինչեւ Նիւ Եորքի ու Փենսիլվանիայի հեռաւոր անասներէն: Ներկայներուն համար այս եկեղեցին ներս, նման ազգային քաղաքական պարունակով հրապարակային հանդիսութիւն մը, անկասկած արժանացաւ բոլորին անվերապահ գնահատանքին ու հիացմունքին:



Հանդիսավարն էր փաստաբան Փիթըր Ղուկասեան, որ ԱՀԱՄի Տնօրէն Խորհուրդին անդամ է: Ան արժեւորեց այս ձեռնարկը եւ հանգամանօրէն այնուհետեւ ընթացք տուաւ յայտագրին: Ըսեց, որ այս պատանեկան կեդրոնը կը պատկանի Պոլսոյ հայ անտարանական համայնքին: Հրահանգ Կիւրճեան եղած է անոր հիմնադիրը եւ հայկական գաւառները այցելելով կատարած է շնորհալի աշխատանք ի մի հաւաքելով հայու բեկորները ու բերելով գաւառը այս պատանեկան հաստատութենէն ներս, իսմամբ, ազգային ու քրիստոնեական կրթութիւն տուած, տոհմային ղազատարակութիւնն է հպարտութիւն շամբած ու վերադարձուցած զիրենց իրենց ծննդավայրերը: Այս սքանչելի իրագործման նշումն էր որ կը կատարուէր այդ երեկոյ: Առաջելակն ու նուիրական աշխատանք մը, անկասկած: Ու այս տունէն անցած է ինքը՝ Հրահանգ Տիգրան: Եկեղեցոյ սրահին մէջ ներկայ էր Չաքար Տիգրան, որ իր կարգին ապաստարան էր գտած Հրահանգ Կիւրճեանի մօտ: Այս բոլորը կենդանի վկայութիւններն էին մեծ հայուն ու մարդերին՝ Կիւրճեանին:

Չաւեն Խանճեան արժեւորեց կատարուած մարդասիրական, բայց հայկական իրաւունքի հեռանկարներով, այս աշխատանքը: Ինքնավստահ ան յայտարարեց որ այսօրուան պահանջատիրութիւնը վերատիրական պատանեկան այս տան կը մտի մեր արդար իրաւունքներու այն համազգային եւ համընդհանուր ծրագրին որ Ցեղասպանութեան դարադարձին կը կատարեն մեր ազգային մնացեալ բոլոր հաստատութիւնները:



Վերապատուելի Պերճ Կիւրճեան, ըսիկ Չաւեն (Լիբանան) որ հովին է եկեղեցոյ, իր կարգին անդրադարձաւ այս գրքին իր ատարակութեան կարեւորութեան՝ տարածելու գայն մեր համայնքէն ներս: Ձեռով մը այս ցոյց պիտի տայ մեր արդար իրաւունքներուն մաս կազմած այն ցանկին, որ շուտով պիտի ընդարձակուի եւ հանրութեան մատչելի դառնայ: Այս գիրքին թարգմանութիւնը կատարած է Երուսաղէմի Գոգոնեան իսկ մեկնատուները՝ Տոքթ. Վիգէն Եւ Սօսի Ահարոնեան ու Տոքթ. Ստեփան եւ Զիւլի Ահարոնեան ամուլը, զայն նուիրելով՝ իրենց հօր՝ Վերապատուելի Յովհաննէս Ահարոնեանի, եղբայրը Մեծ Երագի Ճամբուն ուղեւորին՝ Գերսամ Ահարոնեանի:

Երրորդ խօսք անողը եղաւ Ռաթկըզ Համալսարանի (Նիւ Ճորճի) Ցեղասպանութեան յայտագիրը համադրող կազմակերպիչ Մուրատեան: Ան տեսաբերիկ վրայ ցոյց տուաւ բնագրաւուած մեր հողերուն վրայ ապրող հայու բեկորներուն կեանքը, որոնք կը շարունակեն ընդունելի իրենց տոհմային ինքնութիւնը: Խաչիկին դէպի պատմական Հայաստան այցելութիւններուն մաս կը կազմեն հանդիպումները այն ափ մը հայերուն, որոնք թերեւս իսլամացած կը շարունակեն պահել այդ հողերը որպէս իրաւատեր: Յուզիչ պատկերներ, որոնք, վստահաբար, այսուհետեւ պիտի շարունակեն ի յայտ գալ գանազան ուխտագնացութիւններու ընթացքին, որոնք այս փերուն վրայ սկսան նախաձեռնուիլ Առաջնորդ կաթողիկոսի կողմէն: Պարսամեանի կողմէն մօտ հնգամեակ մը առաջ, երբ Ամերիկայի Հայոց Առաջնորդութիւնը հանդիսութիւնը ունեցաւ կազմակերպելու առաջին պաշտօնական ուխտագնացութիւն մը դէպի Պատմական ու Յուներժակայն Հայաստան, դէպի բնագրաւուած մեր Հայրենիքը:

Միայն կ'արժէ շնորհաւորել Ամերիկայի Հայ Անտարանակալական Ընկերութեան այս նախաձեռնութիւնը եւ յայտնել շնորհակալութիւն Չաւեն Խանճեանին:

Տրամադրուած գիրքերէն օրինակներ ներկայներէն շատեր գնեցին եւ ճոխ հիւրասիրութեամբ ամիթ ունեցան մօտէն ճանաչելու յայտագրին մաս կազմող բանախօսները:

ՅԱՎՈՒ ՎԱՐԻՎԱՆԵԱՆ

# ՉԱՐԹՈՒԿԱԼ ԿՓՈՐ

ԵՐՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 21 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՍՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄ

## ՓՈՐԹՈՒԿԱԼ ԵՒ ՇՈՒԵՏԸ ՅԱՂԹԱԿԱՆ

Երոպայի մինչեւ 21 տարեկան ֆուլթայի ախոյեանութեան կիսաւարտական հանգրուանի առաջին մրցումին, Փորթուկալը մրցեցաւ Գերմանիոյ դէմ եւ յաղթեց 5-0 հաշիւով: Մոնաքոյի Պերնարտո Սիլվան, Ռիքարտո Փերեյրան, Պենֆիքայի Իվան Զավալեյրոն, Սիլվիոյի Լիգալոնի Ժոա Մարիոն եւ Մալակայի Ռիքարտո Յորթան նշանակեցին կոլերը:



Իսկ այս հանգրուանի երկրորդ մրցումին Շուէտ յաղթեց Դանիային 4-1 հաշիւով: Կոլերու հեղինակ դարձան Մանչեսթըր Սիթիի Ճոն Կրոսթօթին, Կրոնիսկընի Սիմոն Թիպպինսկը, Փալերմոյի Ռոպին Զուեզոնը եւ Փի Ես Վի Ալստոնովը Օսքար Հիլլըմարը, մինչ Դանիոյ միակ կոլը նշանակեց դանիական Նորսայիլանտ խումբէն Ուֆէ Պեյը:

ԵՐՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 17 ՏԱՐԵԿԱՆ ԱՂԻԿՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆ.

## ՍՊԱՆԻԱՆ, ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՉՈՒԻՑԵՐԻԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԱՆ ՀԱՍԱՆ ԿԻՍՄԱՐՏԱԿԱՆ

Երոպայի մինչեւ 17 տարեկան աղիկներու ախոյեանութեան գտումի երրորդ եւ վերջին հանգրուանին, Սպանիան յաղթեց Իսլանտային, Գերմանիան յաղթեց Անգլիային եւ Չուիցերիան յաղթեց Ֆրանսային: Այս արդիւնքներուն հիման վրայ Սպանիան, Գերմանիան, Չուիցերիան եւ Ֆրանսան հասան կիսաւարտական հանգրուան: Չտումի երրորդ հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ա.խմբակ.**
  - Սպանիա - Իսլանտա 2-0, - Գերմանիա - Անգլիա 5-0, Դասաւորում.1-Սպանիա 7 կէտ, 2-Գերմանիա 6 կէտ, 3-Անգլիա 4 կէտ, 4-Իսլանտա 0 կէտ,
- Բ.խմբակ.**
  - Նորվեգիա - Իրլանտա 2-0, - Ֆրանսա - Չուիցերիա 1-2, Դասաւորում.1-Չուիցերիա 7 կէտ, 2-Ֆրանսա 6 կէտ, 3-Նորվեգիա 4 կէտ, 4-Իրլանտա 0 կէտ:

## ԱՓՐԻԿԵԻ ԶԵՍՓԵՆՆԵՆ ԼԻԿԻ ԶՏՈՒՄԻ Ա.ՀԱՆԳՐՈՒՄ ԱՆՈՅԵԱՆԸ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ

Ափրիկեի ախոյեաններու բաժանին՝ Զեմբիլըզ լիկի Ա. Հանգրուանին ախոյեան Ուիլֆաբ Սթեյֆ իր դաշտին վրայ զիջեցաւ համերկրացի Ալմէր Եու Ես Եմին: Առաջին հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ա.խմբակ.**
  - Մագմալե (Դեմ.Զոնկո) - Ալ Հիլալ Օմտուրման (Սուտան) 0-0, - Սմուհա (Եգիպտոս) - Մադրեպ Թեթուան (Մարոք) 3-2,
- Բ.խմբակ.**
  - Ալ Մարրիի (Սուտան) - Էլ Ուլմա (Ալճերիա) 2-0, - Ուիլֆաբ Սթեյֆ (Ալճերիա) - Իւ Ես Եմ Ալմէ (Ալճերիա) 1-2:

## ԱՓՐԻԿԵԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄԻ Ա.ՀԱՆԳՐՈՒՄ ԱԼ ԱՐԼԻ ԵՒ ԶԱՄԱԼԵՔ ՅԱՂԹԵՑԻՆ

Ափրիկեի Ֆետերասիոնի բաժանի Ա. Հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ա.խմբակ.**
  - Նըժմէթ Ալ Սահել (Թունիզ) - Սթատ Մալիէն Պամաքո (Մալի) 1-0,
  - Ալ Ահիլ (Եգիպտոս) - Թարաժի (Թունիզ) 3-0,
- Բ.խմբակ.**
  - Լեոփարտ Տեո Տոլիսիէ (Զոնկո) - Օրլանտո Փայրեթ (Հար.Ափրիկե) 0-1,
  - Չամալեք (Եգիպտոս) - Ալ Սաֆաքսի (Թունիզ) 1-0:

ՊՐԱԶԻԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ

## ՍՓՈՐԹ ՌԵՍԻՖԵՆ ՀԱՎԱՍԱՐԵՑԱՒ

Պրագիլի ֆուլթայի ախոյեանութեան 9-րդ հանգրուանին առաջատար Սփորթ Ռեսիֆէն իր դաշտէն դուրս հաւասարեցաւ Ըափեթընսէի հետ 1-1 հաշիւով: Խումբին կոլը նշանակեց Ռիթիլի, Տիկե Սուգայի փոխանցումէն օգուտելով: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Աթլէթիք Սիւնթո - ժոնկիլ 1-0, կոլ.Լեոնարտո Սիլվա,
- Կոյաս - Ֆլուրինսէս 1-2, կոլեր Էրիք - Ռակլըր, Էտսըն,
- Փալմեյրաս - Սաօ Փաուլօ 4-0, կոլեր.
- Ավայ Ֆլորիանոփոլիս - Կրեմօ Փորթօ Ալեկը 1-2,
- Ինթերնասիոնալ - Սանթոս 1-0, Դասաւորում.1-Սփորթ Ռեսիֆէ 19 կէտ, 2-Աթլէթիք Սիւնթո 17 կէտ, 3-Ֆլուրինսէս 17 կէտ, Ռմբարկուներ են 1-Ռիքարտո Օլիվէրա (Սանթոս) 5 կոլ, 2-Ռեմաթ Զախա (Փոնթ Գրեթա) 5 կոլ, 3-Սիքիաօ (Աթլէթիք Փարանսէս) 4 կոլ:

# ԱՄՆ-Ի ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ

## ՏԻ ՍԻ ԵՈՒՆԱՅԹԸՆ ԿԵՏ ԿՈՐԱՆՑՈՒՑ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու ֆուլթայի ախոյեանութեան Արեւելեան շրջանի առաջատար Տի Սի Եուլայթըտ, իր դաշտէն դուրս առանց կոլերու հաւասարեցաւ Թորոնթոյի հետ: Իսկ Արեւմտեան շրջանի առաջատար Վանքուվըր Ուայթէվալը իր դաշտէն դուրս յաղթեց Մասաչուսեթս Լիու Ինկլընտին 2-1 հաշիւով: Ուրուկուէյցիներ Թէչերա եւ Ռիվերօ, տուգանային հարուածով նշանակեցին կոլերը: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Տալաս - Հիուսթըն Տայնքս 2-0,
- Ես Ճէյ Ըրթընէյքս - Լոս Անճելըս Կալաքսի 3-1,
- Նիւ Եորք Սիթի - Նիւ Եորք Ար Պի 1-3,
- Փորթլէտ Թիմալըզ - Սիթթըլ Սաունտըզ 4-1, Արեւելեան շրջանի դասաւորում.
- 1-Տի Սի Եուլայթըտ 35 կէտ, 2-Սի Ինկլընտ 24 կէտ, 3-Նիւ Եորք Ար Պի 23 կէտ, Արեւմտեան շրջանի դասաւորում.
- 1-Ուայթէվա 32 կէտ, 2-Սիթթըլ Սաունտըզ 29 կէտ, 3-Փորթլէտ Թիմալըզ 28 կէտ, Ռմբարկուներ.1-Զ.Զամարա (Ելիւմպիս) 12 կոլ, 2-Զ.Ռոնտոլովսի (Ըրթընէյքս) 9 կոլ, 3-Ջաքա (Օրլանտո) 8 կոլ,

ՄԻՋԱԶՊԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

- Մեքսիքա - Զոսթա Ռիքա 2-2,

## ԵՐԵՎԱԹԻ ՕՐՈՒՄԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Ստորեւ տեսնել Երեքշաբթի օրուան մրցումներու յայտագիրը (փակագիծի մէջ խումբին դիրքը).

ԱՇԽԱՐՀԻ ԿԻՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՍՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄ

ժամը 02:00 Գերմանիա - ԱՄՆ, ԵՐՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 21 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՈՅԵԱՆ. ԱՄՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄ

ժամը 21:45 Փորթուկալ - Շուէտ, ԶՈՓԱ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԻՍՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄ ժամը 02:30 Արժանթին - Փարակուէլ, ԶԵՍՓԵՆՆԵՆ ԼԻԿԻ ՆԱԽԱՊԱՐՏԱՍԱԿԱՆ Ա.ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԵՐԹ ժամը 19:00 Փիլիպ (Հայաստան) - Ֆոլկորէ (Սան Մարիո), -ժամը 21:00 Լիւքսըմբուրգ Ռեու Իմփս (Ճիպրալթար) - Սանթա Զոլմա (Աստորրա), -ժամը 21:45 Զրուկէյտըզ (Հիւս.Իրլանտա) - Լեւտիա (Եսթոնիա),

ԻՐՐՈՒԱԼ ԼԻԿԻ ՆԱԽԱՊԱՐՏԱՍԱԿԱՆ Ա.ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԵՐԹ ժամը 19:00 Պալազ (Մալթա) - Ժիլեզիքար Սարայետ (Պոսնիա Զեքեկոսիա), -ժամը 20:00 Փոկլոս Կիտըրըն (Լիքսեմպուրկ) - Շեմրոք Ռովըզ (Իրլանտա), -ժամը 22:00 Ռենով (Մակեդոնիա) - Տասիա Զիգիսաու (Մոլտովա):

ԾԱՏՐԱԿ

## ԳԱԳԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԱՐԱՅԱՒ

Նորվեկիոյ Սթեյվենըր քաղաքին մէջ մրցաշարքին մասին լրատուութիւն պատրաստած միջոցին յանկարծամահ եղաւ Հայաստանի ճատրակի ամենանշանաւոր թղթակից Գագիկ Յովհաննիսեանը, 68 տարեկան հասակին: Ան ծանօթ է որպէս «Շախմատ 64» պատկերասփիւռի շաքաթական ճատրակի ծրագրի ներկայացնող, ինչպէս նաեւ «Շախմատային Հայաստան» ճատրակի ամսաթերթի հիմնադիր եւ գլխաւոր խմբագիր: Ան Հայաստանի ճատրակի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղարն էր 1970-էն ի վեր: Երեւանի Պետական Համալսարանի լրագրութեան բաժնի դասախօս էր: Ան բարձր պաշտօններ վարած է եւ կը վարէր ճատրակի Միջազգային ֆետերասիոնի՝ ՖԻՏԵ-ի մէջ: Ան ճատրակի մասին 51 գիրքերու հեղինակ է հայերէն, անգլերէն եւ ռուսերէն լեզուներով: Գագիկ Յովհաննիսեան ծանօթ էր որպէս ճատրակի մրցումներու վարպետ մեկնաբան, ազնի անձնաւորութիւն, որուն շաքաթական մեկնաբանութիւնները եւ իրատարակած գիրքերը կը վայելէր բարձր վարկ: Պատիւ արժանաւորին՝ հայ ազգի գաւազ, ճատրակի լրագրող եւ մասնագետ Գագիկ Յովհաննիսեանին:



ԵՐՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐ

## ԱՌԱՋԻՆ ԽԱՂԵՐԸ ԻՐԵՆՑ ԱՄԱՐՏԻՆ ՀԱՍԱՆ

Պաքոյի մէջ իրենց ակարտիս հասան առաջին Երոպական Խաղերը: Ընդհանուր ամամբ խաղերը լաւ կազմակերպուած էին: Ռուսերը փայլուն արդիւնքներ արձանագրեցին գրեթէ բոլոր մարզաձեւերուն մէջ: Մեծն Բրիտանիան եւ Գերմանիան արձանագրեցին բաւական լաւ արդիւնքներ: Ազրայէճանը գրաւեց երկրորդ դիրքը Ռուսիայէն ետք: Այս արդիւնքը ան կը պարտի մասամբ կազմակերպիչ երկիր ըլլալու հանգամանքին եւ լաւ պատրաստութեան, մասամբ ալ օտար լաւ մարզիկներ որպէս ազրայէճանցի մասնակցի տալու իր քաղաքականութեան, կարգ մը անհատական մարզաձեւերու մէջ ալ իրաւարարական կողմնակալութեան, ինչպէս որ պատահեցաւ շատ մը հայ մարզիկներու պարագային: Հայաստան շնորհիւ Միւրան Յարութիւնեանի արծաթէ մետալին գրաւեց 36-րդ դիրքը:



# Մ ա ր գ ա կ ա ն

(Շարունակում Չ. Էջեն)



Թշնամի երկրի մէջ մրցելու պարտաւորութիւնը իր հոգեկան ազդեցութիւնը թողուց շատ մը հայ մարզիկներու վրայ:

Մրցաշարքի ընթացքին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

-3 x 3 պասքէթպոլի կիներու աւարտական մրցումին Ռուսիան յաղթեց Ուզբէկիստանին 22-17 հաշիւով, իսկ երրորդ դիրքի մրցումին Սպանիան յաղթեց Սլովենիային:

-3 x 3 պասքէթպոլի տղոց աւարտական մրցումին Ռուսիան յաղթեց Սպանիային 18-14 հաշիւով, իսկ երրորդ դիրքի մրցումին Սերպիան յաղթեց Սլովենիային:

-Շովպահի ֆուլպոլի մրցումներու աւարտական հանգրուանին Ռուսիան յաղթեց Իտալիային 3-2 հաշիւով, իսկ երրորդ դիրքի մրցումին Լեհաստանը յաղթեց Չուիցերիային 6-5 հաշիւով:

-Վոլիպոլի կիներու մրցումի աւարտական հանգրուանին Թուրքիան յաղթեց Լեհաստանին 3-0 սեթերու հաշիւով, իսկ երրորդ դիրքի մրցումին Սերպիան յաղթեց Արգենտինային 3-2 սեթերու հաշիւով:

-Վոլիպոլի տղոց մրցումի աւարտական հանգրուանին Գերմանիան յաղթեց Պոլսի մրցումին 3-1 սեթերու հաշիւով, իսկ երրորդ դիրքի մրցումին Ռուսիան յաղթեց Լեհաստանին 3-1 սեթերու հաշիւով:

-Նետաձգութեան մրցումներուն փայլեցան իտալացիները, ուզբէկացիները, գերմանացիները եւ սպանացիները:

-Պատմիչութեան մրցումներուն փայլեցան ռուսացիները, սպանացիները, պուլկարացիները, իտալացիները, ուզբէկացիները եւ գերմանացիները:



-Շովպահի վոլիպոլի մրցումներուն փայլեցան գուլիցերիացիները եւ լաթվիացիները:

-Բոսնիացիներու մարզաձեւի մրցումներուն փայլեցան ռուսները, բրիտանացիները, հոլանտացիները եւ ազրբայճանցիները:

-Մարմամարզութեան մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, ազրբայճանցիները, գերմանացիները, պելաճուները, ուզբէկացիները, հոլանտացիները եւ սպանացիները:

-Ջրացատքի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, բրիտանացիները եւ գերմանացիները:

-Սուսերամարտի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, բրիտանացիները, ֆրանսացիները, իտալացիները եւ ուզբէկացիները:

-Թրամպոլինի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները:

-Ճիւտոյի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, ազրբայճանցիները, գերմանացիները, ֆրանսացիները, ուզբէկացիները եւ հոլանտացիները:

-Սամպո ըմբշամարտի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, պելաճուները եւ սերպերը:

-Նշանաձգութեան մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, բրիտանացիները, գերմանացիները, ֆրանսացիները, իտալացիները, պելաճուները, սպանացիները եւ սերպերը:

-Լողարշափի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, բրիտանացիները, գերմանացիները, ֆրանսացիները, իտալացիները, ուզբէկացիները եւ հոլանտացիները:

-Կշռութեամբ լողի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները:

-Թաեղուտոյի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, ազրբայճանցիները, բրիտանացիները եւ ֆրանսացիները:

-Ջրագնդակի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները եւ սերպերը:

-Ըմբշամարտի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ռուսները, ազրբայճանցիները, պելաճուները եւ ուզբէկացիները:

-Ջրարթի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ազրբայճանցիները, ֆրանսացիները եւ սպանացիները:

-Եռամարտի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին բրիտանացիները:

-Թիւրքմարտի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին գերմանացիները, պելաճուները, սերպերը եւ ռուսացիները:

-Սեղանի թենիսի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին գերմանացիները եւ հոլանտացիները:

-Պէ Էմ Էքս հեծելարշափի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին ֆրանսացիները:

-Յեղանակի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին պելաճուները, հոլանտացիները եւ սպանացիները:

-Մաուլթի պայքի մրցումներուն փայլուն արդիւնքներ արձանագրեցին գուլիցերիացիները:

Մետալներու վերջնական դասաւորումը հետեւեալն է.

1-Ռուսիա	79 ոսկի,	40 արծաթ,	45 պրոնզ,	գումար 164
2-Ազրբայճան	21,	15,	20,	56,
3-Բրիտանիա	18,	10,	19,	47,
4-Գերմանիա	16,	17,	33	66,
5-Ֆրանսա	12,	13,	18,	43,
36-Յայաստան	0,	1,	0,	1

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՅԵԱԼԵՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ ԱՇՈՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



Մեր թուականէն 43 տարիներ առաջ՝ 1972ին Երեւանի մէջ մահացած է պատմաբան, պետական գործիչ եւ Գիտութիւններու Ակադեմիայի ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեան:

Ա. Յովհաննիսեան ծնած է 17 Յունիս 1887ին, Շուշի: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ, բարձրագոյն ուսումը Գերմանիոյ մէջ, ուսանելով Ենայի, Գալլիի եւ Միւնիխի համալսարանները:

Մասնագիտացած է տնտեսագիտութեան եւ փիլիսոփայութեան բնագաւառներէն ներս: Ուսումը աւարտելէ ետք, 1913ին սկսած է ուսուցչութեան պաշտօն վարել Էջմիածնի Գործարարական դպրոցին մէջ, բարձրագոյն ուսումը Գերմանիոյ մէջ, ուսանելով Ենայի, Գալլիի եւ Միւնիխի համալսարաններէն ներս: 1918էն սկսեալ եղած է Մոսկուայի Լազարեան ճեմարանի փրոֆէսոր: 1921-1926 տարիներուն դասաւանդած է Երեւանի Պետական Համալսարանին մէջ: Կատարած է գիտման կարգադրական բազմաթիւ աշխատանքներ, սակայն 1937ին անհիմն ամբաստանութիւններով դատուած է եւ բանտ մտած: 1943ին դուրս եկած է բանտէն եւ սկսած աշխատիլ Գայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի պատմութեան հիմնարկի Նոր Պատմութեան բաժնի:

Ա. Յովհաննիսեան եղած է Գիտութիւններու Ակադեմիայի Պատմութեան հիմնարկի հրատարակած «Հայ ժողովուրդի Պատմութիւն» բազմահատորեակի գլխաւոր խմբագիրն ու հեղինակներէն մէկը: Անոր հիմնական աշխատանքները եւ ուսումնասիրութիւնները նուիրուած են հայ ազատագրական միացի եւ հայ-ռուսական յարաբերութիւններու պատմութեան:

Ա. Յովհաննիսեանի գործերէն են «Դրուագներ Հայ Ազատագրական Միացի Պատմութեան», 1957, «Նալպաստեանը եւ Նրա ժամանակը», 1956, «Ֆիլիք Պատմաբանական լոյսի տակ», 1955, «Յուշեր եւ Բնութագրումներ»: խմբագրած է «Հայ-ռուսական յարաբերութիւնները XVIII դարու առաջին երեսնամեակին» եւ այլ բազմաթիւ գործեր:

# Մ Ա Յ Ա Ձ Դ

Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Սիւնհոդոսական Հայրերը  
Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը  
Լիբանանի Կաթողիկէ Պատրիարքներու եւ Եպիսկոպոսներու  
Համաժողովը (APECL)  
Չմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութիւնը  
Ժորժ Թազա եւ ընտանիքը  
եւ համայն Թազա ընտանիքը  
կը գումարեն մահը

## ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԷՆ  
ՏԱՆԻ ԿԻՆԿԻՆՅՈՑ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՏ

որ պատահեցաւ Հիւնզաբթի, 25 Յունիս 2015-ի առաւօտեան ժամը 8:45-ին, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին մէջ:  
Եկեղեցւոյ թաղման կարգը եւ յուղարկաւորութիւնը պիտի կատարուին Երեքշաբթի, 30 Յունիս 2015, կ.ե. ժամը 4-ին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ-Սուրբ Եղիա Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ:  
Ապա հանգուցեալ Հայրապետին մարմինը պիտի փոխադրուի եւ ամփոփուի Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Սրբոյ Կուսին Աւետման եկեղեցւոյ պատրիարքներու դամբարանին մէջ:

Յաւակցութիւնները պիտի ընդունուին  
Երկուշաբթի 29 Յունիսին եւ Գորեքշաբթի 1 Յունիսին  
առաւօտեան ժամը 10:00-էն 13:00-էն կ'ըստը ետք ժամը 4:00-էն 7:00  
եւ Երեքշաբթի 30 Յունիսին  
առաւօտեան ժամը 10:00-էն 13:00  
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի դահլիճին մէջ:

Կիրակի, 28 Յունիսի կ'ըստը ետք ժամը 5-ին հանգստեան սուրբ Պատարագ մատուցուցաւ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Սրբոյ Կուսին Աւետման եկեղեցւոյ մէջ, որմէ ետք հաւատացեալները հրաւիրուեցան վերջին հրաժեշտը տալու երանաշնորհ Հայրապետին, որ պիտի շարունակուի մինչեւ Երեքշաբթի կ'ըստը ժամը 1:

## ՀԱՅ ԱՄԵՏ ԳՈՒԼԵՃԻ 100 ԱՌ 100 ՊԱՏՈՒԱԲԵՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՊՐԵՎԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԵԱՆ

Հայ Աւետ. Գուլեճի Տնօրէնութիւնս ուրախութեամբ կը յայտնէ թէ իր 9-րդ դասարանի ամբողջութիւնը ներկայացնող հետեւեալ 9 աշակերտներէն 9-ն ալ յաջողած են կրթական պետական ընտրութեան, արձանագրելով 100 առ 100 պատուաբեր արդիւնք.  
Փերլա Պատեթ (շատ լաւ յիշատակութեամբ), Վարդ-Վարս Սկրտիչեան (լաւ յիշատակութեամբ), Ռոնա Աթուի (լաւ յիշատակութեամբ), Մերժ Թերզեան (լաւ յիշատակութեամբ), Զարթիկա Տումանեան, Չարին Թաշճեան, Կերի Լեփեճեան, Յովիկ Գասպարեան եւ Աննա Մարիա Տեմիրճեան:

**ANTOINE SALIBA**  
WORLD OF JEWELRY

**Կ ' Ո Ւ Չ Ո Ւ Ի**

ԱՆԹՈՒՆ ՍԱԼԻԳՍ ոսկերչական հաստատութիւնը իր 2ուցի մասնաճիւղին համար կարիքը ունի ոսկերիչ (սետեթեր) եւ ոսկի փայլեցնող (ծիւղ ընող) վարպետներու:  
Հեռ.: 76-777543  
Հետաքրքրուողները կրնան իրենց e/v-ն դրկել՝  
Email: rawad@antoinosaliba.com

**Կ ' Ո Ւ Չ Ո Ւ Ի**

Թեքեան Մշակութային Միութիւնը կարիքը ունի քարտուղարուիի մը:  
Հետաքրքրուողները կրնան դիմել Թեքեան Կեդրոն, Ժըմնեյգի եւ կամ հեռաձայնել 01-566709 թիւին:

Այցելեցէ՛ք  
Կարդացէ՛ք  
Տարածեցէ՛ք  
[www.RagMamoul.net-ը](http://www.RagMamoul.net-ը)

Պաշտպանութիւնը շարունակուի Երեւանի մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սարկած վրիպակներու պարագային, կ'ապաւինին յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:

**ԾԱՐԹՆԵՐ**

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿՈՒԹԵԱՆ ԸՄԵՆՈՒՄՆ ՈՒ ՀԱՏՈՒՅՈՒՄԸ ՆՈՐ ՀՈՐԻՋՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ՄԵՐՏԱԿԱՐԳՆԵՐՈՒ ԿԻՄԵՅ**

**ՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԴԱՏԻՆ ԶՈՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ**  
Հրապարակային Դասախօսութիւն - Մամլոյ Ատուի - Երիտասարդական Հանդիպում

Կազմակերպութեամբ  
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան  
Տեղեկատուական Գրասենեակին

**ՀՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ՅՈՒՆԻՍ 2015, ԵՐԵՎԱՆԻ ժԱՄՐ 7:30-ԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ «ԿԻԼԻԿԻԱ» ԹՅԱՆՁԱՐԱՆԻ ՄՐԱԻ:**

**ՄՈՂՈՅ ՍՈՐԻՍ**  
Մասնակիցներ՝  
Ռուկ. Փայլամ Սիւան - Փայտաբան Միջազգային Ատենաներու Սօս  
Փրոֆ. Թանէր Աբջամ - Մասնագէտ Հայրը Յեղասպանութեան  
Ռուկ. Սորա Պայրազարեան - Դասախօս Լիբանանեան Համալսարանի  
Ռուկ. ՃԷՄ Սոֆուլոյ - Փաստաբան կալուածային հարցերու

Հորեքշաբթի, 1 Յունիս 2015, առաւօտեան ժամը 10-ին, Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի մրահ:

**ՀԱՅՈՒՄՆ-ԵՐԿՍՈՒԹԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ՓՐՈՑ. ԹԵՐԵ ԱԲՅԱՄ ԻՄԵՐ**  
Կազմակերպութեամբ ՀԵՅՈՒՄ-Ի

Հորեքշաբթի, 1 Յունիս 2015, երեկոյեան ժամը 7:30-ին, Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի մրահ:

**Հրաւեր**

**Our e-mail addresses are:**

[zartonkadl@gmail.com](mailto:zartonkadl@gmail.com)  
[zartonkdaily@yahoo.com](mailto:zartonkdaily@yahoo.com)

website:  
[www.zartonkdaily.com](http://www.zartonkdaily.com)

**DE LUNETTE**  
**La Premiere au Liban**

Autoroute Jdeideh Pres  
Boghos Optic  
Tel: 01-870016